



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«03» 03 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0035 - 23

Ձեռնարկողը՝

Քաղաքացի Հայկ Հայրապետյան
ք. Երևան, Ավան-Առինջ 2/2ա., 30թն.

Գործունեությունը՝

«Դիլիջան» ազգային պարկի և Դիլիջան քաղաքի վարչական տարածքներով ջրագծի անցկացման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեկշիռը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0035-23

«03» 03 2023թ.

«Դիլիջան» ազգային պարկի և Դիլիջան քաղաքի վարչական տարածքներով ջրագծի անցկացման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	Քաղաքացի Հայկ Հայրապետյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Տավուշի մարզ, Դիլիջան համայնք

Քաղաքացի Հայկ Հայրապետյանի կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությամբ /այսուհետ՝ հաշվետվություն/ նախատեսվում է «Դիլիջան» ազգային պարկի և Դիլիջան քաղաքի վարչական տարածքներով ջրագծի անցկացման աշխատանքներ:

Գործունեության իրականացման համար հիմք է հանդիսացել շրջակա միջավայրի նախարարության կողմից 2021թ. օգոստոսի 16-ին տրված N0309-21 2-2-Ջ-Մ-Ն ջրօգտագործման թույլտվությունը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:


Նկարագրական մաս. Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Տավուշի մարզում՝ Դիլիջան համայնքի, Յերկով հանդամասում: Ջրագծի անցկացումը նախատեսվում է սեփականության իրավունքով Հ. Հայրապետյանին պատկանող 3.0հա հողատարածքի ոռոգման իրականացման համար:

Ոռոգման ենթակա հողատարածքի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, իսկ գործառնական նշանակությունը՝ վարելահող: Նշված տարածքում բացակայում է ոռոգման ջրի մատակարարման հնարավորությունը:

Համաձայն Ջրօգտագործման թույլտվության /ՋԹ/, որպես ջրառի կետ սահմանվել են $X=44^{\circ} 49' 27.2''$, $Y=40^{\circ} 41' 06.2''$ կոորդինատները: ՋԹ-ով սահմանված ջրաքանակը կազմում է՝ առավելագույնը 13.200 հազ մ³/տարի, 88 մ³/օր, 2.44 լ/վրկ:

Գործունեության տարածքը աչքի է ընկնում բարդ երկրաբանական կառուցվածքով: Քաղաքի տարածքում և դրա շրջակայքում լայն տարածում ունեն սողանքային երևույթները, սելավները, փլզումները և այլ վտանգավոր երկրաբանական երևույթներ:

Դիլիջանն առանձնանում է մեղմ լեռնաանտառային կլիմայով, որին բնորոշ է չոր և տաք եղանակն ամբողջ տարվա ընթացքում: Շրջանի կլիման բարեխառն է: Բնութագրվում է մեղմ ամառներով $+34^{\circ}\text{C}$, համեմատաբար ցուրտ ձմեռներով -23°C : Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 5.3°C , ամենաշոգ օգոստոս ամսվա միջին ջերմաստիճանը՝ $+20.6^{\circ}\text{C}$, ամենացուրտ ամսվանը հունվար՝ -8.5°C : Առավելագույնը դիտվում է մայիս ամսին



109 մմ, նվազագույնը հունվարին՝ 27 մմ: Ձյան տեսքով թափվող տեղումների քանակությունը 67 մմ է: Ձյան ծածկույթի առավելագույն շերտի բարձրությունը 74 սմ է, նվազագույնը 3 սմ: Տեղումների միջին տարեկան քանակը կազմում է 593 մմ:

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 73 %: Քամու միջին տարեկան արագությունը կազմում է 3.1 մ/վրկ:

Հարուստ գետային ցանցը տարածաշրջանի առանձնահատկությունն է, գետերն ու գետակները տիպիկ լեռնային են, սնվում են ձնհալից և անձրևաջրերից, ինչպես նաև բազմաթիվ ստորերկրյա աղբյուրներից:

Ծառաթփային բուսականությունը նախատեսվող գործունեության հատվածում բացակայում է:

Համաձայն հաշվետվության՝ նախատեսվող խողովակաշարի ընդհանուր երկարությունը կազմում է 2124 մ, որից 1133 մ անցնում է Դիլիջանի համայնքին պատկանող հողամասերով, որը հանդիսանում է վարելահող, իսկ 991 մ «Դիլիջան» ԱՊ-ին պատկանող հողամասերով, գրունտային ճանապարհի եզրով: Խողովակաշարի խորությունը նախատեսվում է 0.8մ, լայնությունը 0.3մ: Խողովակի տրամագիծը 50մմ /պոլիէթիլենի/:

Ելնելով տեղանքի առանձնահատկություններից /բարձրությունների մեծ փոփոխություն/, խողովակաշարում ճնշում ապահովելու համար՝ ջրառի կետում նախատեսվում է մոտ 6խմ ծավալով մետաղական ավազան, որը միաժամանակ կծառայի ջրօգտագործման պայմանագրով նախատեսված ջրաչափական դիտակետ:

Հողային աշխատանքները կատարվելու են անվավոր էքսկավատորի և չորս բանվորի ուժերով: Էկսկավատորի մոտեցումը կիրականացվի գոյություն ունեցող գրունտային ճանապարհով:

Դիլիջանի վարչական տարածքով անցնող հատվածի հողի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ վարելահող: Ջրագծի անցկացման հատվածքում ծառահատում չի իրականացվելու:

Հանվող բուսահողի ծավալը գնահատվել է մոտ 130մ³: Այն տեղում կփռվի շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բնական ռեսուրսներից օգտագործվելու է ջուր, տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Շինարարության ժամանակ՝ ջրցանի, բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստերնով, պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (4 մարդ), ինչը կազմում է 3.464 մ³/շին. ժամ: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները ապահովելու են՝ տեղադրելով շարժական բիոզուգարան, որը տեղադրվելու է վարձակալության հիմունքով և աշխատանքների ավարտից հետո հանվելու է:

Խողովակաշարի անցկացման աշխատանքները նախատեսվում է ավարտել 3-4 աշխատանքային օրվա ընթացքում:

Նախատեսվող գործունեությունը ենթադրում է 450մ³ ծավալի հողային աշխատանքների իրականացում, ինչը խողովակների տեղադրումից հետո անմիջապես օգտագործվելու է հետլիցքի և հարթեցման համար:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, հողային աշխատանքների, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն հայտի շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են



- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկի և ճանապարհների առավելագույն ծանրաբեռնվածությունը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում բացառել հնարավոր շինաղբի կուտակումները:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում հնարավորինս չխաթարել տարածքի էկոհամակարգը, լանդշաֆտը և հարակից շրջակա միջավայրը՝ բացառելով ծառահատումները:

- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլացիաների հայտնաբերման դեպքում՝ անհապաղ տեղեկացնել «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Հայկ Հայրապետյանի կողմից ներկայացված «Դիլիջան» ազգային պարկի և Դիլիջան քաղաքի վարչական տարածքներով ջրագծի անցկացման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ գլխ. մասնագետ



Արմինե Վարդանյան